Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման

դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ «Նոր աշակերտի ինտեգրումը դասարանում»

Հետազոտող ուսուցիչ՝ Ջ. Դունայանցի անվան համար 154 հիմնական դպրոցի դասվար՝ Գ. *Սահակյան*

Բովանդակություն

1. Ներածություն

2. Գրականության ակնարկ

3. Խնդիրների քննարկում

4. Հետազոտության ընթացք

5. Եզրակացություն

6. Գրականություն

Ներածություն

Դպրոց - դա այն վայրն է,որտեղ երեխան 6–18 տարեկան փորձ է ձեռք բերում հասարակության մեջ իր տեղն ու դիրքը զբաղեցնելու համար: Գոյություն ունեն երեք փուլեր դպրոցում սովորելու տարիներին՝

.տարրական դպրոց

.միջին դպրոց

.ավագ դպրոց

Ամենակարևոր և առաջնային ասպեկտը շփման մեջ դպրոցական ցանկացած տարիքում դա հանդիսանում է դասարանական մթնոլորտը:

Գոյություն ունեն իրավիճակներ,երբ երեխան անկախ իր կամքից պարտավոր է փոխել դասարանը կամ դպրոցը:Պատճառները կարող են լինել շատ տարբեր՝բնակավայրի փոփոխություն, ծնողների աշխատավայրի փոփոխություն,ուսուցիչների հետ ծնողի պրոբլեմատիկ փոխհարաբերություններ:

Բոլորս էլ քաջ գիտակցում ենք, որ տեղափոխվել նոր դպրոց,նոր շրջապատ,նոր միջավայր շատ բարդ է: Այն ինչին անձը վաղուց հարմարվել էր,մնում է անցյալում՝համադասարանցիներ,ուսուցիչներ,սիրելի ընկերներ,օրվա ռեժիմ:Անկախ երեխայի ցանկությունից,դա կարող է տեղի ունենալ:Այնուամենայնիվ երեխան պետք է հարմարվի նոր վայրում:

Բեզռուկովը համարում է,որ ինտեգրումը մանկավարժի բարձր հմտության շնորհիվ սահուն և ճիշտ կկատարվի: Չնայած այստեղ շատ կարևոր են նաև աշակերտների մոտեցումները,թե որքան արագ նորեկին կընդունեն իրենց «տարածք»:

Անկասկած նոր աշակերտի ընդունումն ու ինտեգրումը կոլեկտիվում շատ էտապներից է կախված: Կարևոր և նույնիսկ գլխավոր դերն այս գործում իմ կարծիքով ևս ուսուցչին է պատկանում Նրա գործողություններից է կախված,թե որքան արագ կադապտացվի և կընտելանա երեխան նոր դպրոցին,կինտեգրվի կոլեկտիվում և կյուրացնի ուսումնական ծրագիրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Սերունդների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը միշտ եղել է մանկավարժների,փիլիսոփաների,հետազոտողների և հոգեբանների ուշադրության կենտրոնում: Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուիին,ով իր աշխատություններով նպաստում էր կրթության առաջադեմ շարժմանը,համոզված էր,որ լավագույն կրթությանը հասնում են կրթության միջոցով. «Ես հավատում եմ,որ

կրթությունը,հետևաբար ապրելակերպ է և ոչ թե ապագա ապրելու նախապատրաստություն» /իմ մանկավարժական քույր–1897թ/:

Դեռևս Սոկրատեսն էր իր սաներին սովորեցնում տրամաբանելով և վերլուծելով մտածել,սակայն առաջին անգամ այն տեսականորեն մշակել է Ջոն Դյուին:Իսկ ըստ ռուս հայտնի հոգեբան Ս.Յ.Ռուբինշտեյնի,մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով:

Լ.Ս.Վիգոտսկին էլ ձևակերպել է մի օրենք,որտեղ ասվում է,որ ուսուցմանը հետևում է զարգացումը,իսկ անձը զարգանում է գործունեության մեջ:Ակտիվ գործունեության ընթացքում են զարգանում խնդիրները միասին լուծելու կարողությունները և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը,շահագրգռվածություն ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար:

Այնուամենայնիվ, որքան էլ հոգեբանները,փիլիսոփաները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ,ուսումնառության արդյունավետության խնդիրը մնում է չլուծված կամ ոչ ամբողջապես լուծված,քանի որ ուսուցչի համար խնդիր է մնում,թե ինչպես կիրառվի կամ օգտագործվի այդ գործիքը,արդյո±ք դասի մոդելը կօգնի հասնել դրան: Ըստ այդմ էլ յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր խնդրին համապատասխան ռազմավարություն և տալիս առաջ եկած խնդրի լուծում:

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Քայլ 1

Ինչպես օգնել նորեկ աշակերտին ինտեգրվել և ընտելանալ դասարանին:Հոգեբանները կարծում են,որ նոր դասարանում ադապտացվելու համար անհրաժեշտ է 2 ամիս:Երեխան տարբեր փուլերով և աստիճանաբար է հաղթահարում այդ դժվարին գործընթացը:

Երկար տարիներ հետևել ենք տատիկիս և մայրիկիս մանկավարժական գործունեությանը,հասկացել ենք,որ ես ու քույրս ևս պետք է շարունակենք այդ ազգանվեր և հայապահպան աշխատանքը: Մենք ընտանիքի երրորդ սերնդի մանկավարժներն ենք:Կարծում եմ այս կոչումն արյանս մեջ է:Չեմ կարող երեխայի

աչքերի մեջ նայելով չհասկանալ նրա թե հուզական և թե ոգևորված վիճակը: Գրեթե ամեն տարի մեկից ավելի նոր աշակերտի գալուստ ենք տոնում մեր դասարանում; Այո,տոնում:Ես այդպիսի կանոն եմ որդեգրել:Նոր աշակերտի մուտքը մեր դասարան տոն է և պետք է ընդունենք մեծ ոգևորությամբ:

Աշակերտներս և ծնողական խորհուրդը նախապես տեղեկացվում են իմ կողմից,որ նոր աշակերտ ենք ունենալու:Ամեն աշակերտ պետք է յուրովի ողջույնի ձև մտածի և ընդունի նոր ընկերոջը:

Դիմավորում ենք, սկսվում է ծանոթության շղթան:Յուրաքանչյուր աշակերտ բնութագրում է ինքն իրեն մեկական դրական և բացասական հատկանիշներով:Հետո իրեն հետաքրքրող մեկ հարց է ուղղում նոր ընկերոջը: Թղթերը փակցնում են հարցերի պատին:Նորեկը ևս հետևում է այդ կանոնին:Ընկերները կարդում են նկարագրությունները,պատասխանում է հարցերին նոր աշակերտը,մյուսները կարծիքներ են փոխանակում:Նորեկը նստում է այն աշակերտի կողքին, ում նկարագիրը կարողացել է հասկանալ և գուշակել նրա ով լինելը:Դասամիջոցներին սերտ շփվում են և ավելի հարազատ միջավայր են ձևավորում: Չակերտավոր հյուրն օրեր անց դառնում է տան լիարժեք անդամ: Անգամ չի էլ զգում, որ դեռևս երկու շաբաթ է անցել տեղափոխման օրից:

Քայլ 2

Օրինակ՝

Երեք տարի առաջ տնօրենն ինձ կանչեց և ծանոթացրեց մի կնոջ հետ,որի երեխան պետք է տեղափոխվեր իմ դասարան: Ծանոթացանք, զրուցեցինք, հասկացա, որ երեխան ունի հենաշարժողական խնդիր: Ծնվել էր «ուղեղի կաթված» ախտորոշումով:Հայրը լքել էր ու հեռացել՝ հիվանդանոցում թողնելով կնոջն ու նորածին որդուն:Շատ նպատակասլաց կին էր մայրը:Համառորեն պայքարել և մինչ օրս էլ պայքարում է որդու բարօրության համար:

Հուզմունքը խեղդում էր կոկորդս,սակայն պետք էր ուժ գտնել և գործի անցնել:Հրավիրեցի արտահերթ ծնողական ժողով: Բոլոր ծնողներին տեղեկացրի և նախապատրաստեցի մեր դասարան եկող նոր աշակերտի գալուն: Խնդրեցի,սայլակով երեխային տեսնելիս ոչ մի հուզական կամ խղճահարված մոտեցում չցուցաբերեն:Նույնը տանը ծնողները,դպրոցում ես, բացատրեցինք և նախապատրաստեցինք երեխաներին:Աշակերտներիս հետ զրույց անցկացրեցի տարբեր խնդիրներ ունեցող մարդկանց մասին և բացատրեցի,որ ցանկացած ոք ունի կրթվելու իրավունք հանրակրթական դպրոցում:Ոչ ոք ապահովագրված չէ դժբախտ պատահարներից,վթարներից:Դժվարին իրավիճակում հայտնվել կարող է յուրաքանչյուր քաղաքացի, անկախ տարիքից:

Երեխան դպրոց պետք է գար սայլակով: Մեր դասարանը գտնվում էր երկրորդ հարկում,դպրոցը չուներ թեքահարթակ:Դպրոց հասնելն ու բարձրանալն արդեն իսկ խնդիր էր: Տնօրենի աջակցությամբ որոշեցինք դիմել աշակերտական խորհրդի օգնությանը:Կազմակերպեցինք տուն–դպրոց–դասարան երեխայի տեղափոխումը աշակերտների և ծնողների օգնությամբ:

Սեպտեմբերյան հերթական առավոտներից էր:Դուռը լայնակի բացվեց և սայլակին նստած սևաչյա հրաշամանուկին ուղեկցեցին ներս:Նրա աչքերը փայլում էին,շփոթված էր,թաքցնում էր հուզմունքը,իրեն հավաքեց,տեղից ձգվեց և բարձրաձայն ու վստահ ողջունեց մեզ: Դասարանը ոտքի կանգնած և ծափերով ընդունեց Հայկին: Նա ժպտում էր և սկսեց ինքն էլ ծափահարել:Երեխաները շփվեցին, ծանոթացան,հարցեր ուղղեցին Հայկին,որոնց նա շատ գրագետ և սահուն պատասխաններ էր տալիս: Հայկի բանավոր խոսքը զարգացած էր,սակայն գրավորի հետ կար խնդիր:Մոտորիկան լավ զարգացած չէր:Աշխատանքը պետք էր սկսել այդտեղից:Նա աշխատում էր համակարգչով,գրավոր գրելիս տառերը տպագիր էին,դանդաղ էր մտածում: Հայկը ևս դարձավ մեր դասարանի լիիրավ անդամը:

Կատարվեց աշխատանքի բաժանում: Բոլորս սկսեցինք մեր բաժին աշխատանքը: Ես դպրոցում՝ դասի ժամանակ,մայրը տանը, աշակերտները դասամիջոցներին: Գրում էինք միասին, բռնում էի ձեռքից և շարժում էինք գրիչը: Շատ աշխատասեր տղա էր,փորձում էր ինքնուրույն; Օրեր անց ամեն ինչ ստացվեց,այն էլ ինչպես ստացվեց:Գրում էր ճիշտ տողի վրա, ձեռագիր տառերով և նույնիսկ պահպանում էր վայելչագրության կանոնները:

Աշակերտներն էլ բերում էին դասի թեմային համապատասխան նկարներ և Հայկի հետ միասին ներկում էին և հյուսում պատմություններ:Դասամիջոցներին ուղղորդում էի ինքնուրույն միջանցք դուրս գալ՝պտտելով սայլակի անիվները,որը ևս ամրացնում էր ձեռքի մկանները: Անգամ հանձնարարում էի կողքի դասարանի ուսուցչից գիրք խնդրի, բերի դասարան,որը նրան շատ էր ոգևորում և պարտավորեցնում:

Դպրոցի մուտքի մոտ կառուցվեց թեքահարթակ և տեղադրվեց շարժասանդուղք: Տեղաշարժման խնդիրը մասնակի լուծվեց:

Նա ակտիվ և պարտադիր մասնակցում էր նաև դահլիճում անցկացվող ֆիզկուլտուրայի դասերին: Սայլակով սլանում էր գնդակի հետևից,փախցնում այն և խփում ուղիղ նշանակետին: Հայկն ուրախ և անկաշկանդ էր մեր շրջապատում: Ինչպես ընկերները,այնպես էլ Հայկը հոգ էր տանում ընկերներին: Անհանգստանում էր ընկերների ձախողումների և ոգևորվում նրանց ձեռքբերումներով:

Կազմակերպեցինք հերթական էքսկուրսիան: Ավտոբուսը սլանում էր ոլորապտույտ ճանապարհով: Բոլորը երգում էին,ունեին բարձր տրամադրություն:Ոգևորված էր նաև Հայկը: Տեղ հասանք: Երեխաները խաղացին,նախաճաշեցին, հանգստացան և նետվեցին լողավազանի մե: Հայկը տխրեց:Նրա լողալը խնդիր էր: Ոտքերը թույլ էին: Մեր ծնողներից մեկը լողորդ էր: Ի ուրախություն մեզ նա խոստացավ օգնել Հայկին, ինչպես նաև բոլորին: Արագ կազմակերպեցի: Խնդրեցի մայրը վստահի մեզ և լողազգեստ հագցնի: Բերեցին անվտանգության օղակը և Հայկն արդեն ջրի մեջ էր: Նրա ուրախությունն անսահման էր: Չեք պատկերացնի, որքան մեծ էր ընկերների ոգևորությունը, երբ Հայկն իրենց հետ լողավազանում էր: Դա մեր ունեցած հագեցած օրերից մեկն էր:

Քայլ 3

Մեր դասարան եկած նորեկներից մեկն էլ շատ կռվարար և կոպիտ տղա էր: մենք նրան նույն սկզբունքով ընդունեցինք, ինչպես բոլորին: Աշակերտներին խնդրել էի մի փոքր նրբանկատ և հանդուրժող լինել նորեկի նկատմամբ, մինչև լուծում գտնեմ: Խոսեցի մայրիկի հետ: Պարզվեց, որ անհանգստությունը և ագրեսիվ պահվածքն ունի լուրջ պատճառ: Ծնողները հաճախ էին վիճում երեխայի ներկայությամբ միմյանց հետ և հայրը դրսևորում էր կոպիտ վարքագիծ: Խնդրեցի հոգեբանի աջակցությունը,կազմակերպեցի անհատական հանդիպումներ երեխայի և նրա ծնողների հետ: Անկասկած արդյունավետ էր, ժամանակ էր պետք:

Անցել էր մի քանի օր, սակայն տղան չէր հարմարվում իր նոր ընկերների և շրջապատի հետ: Ամեն անգամ նրբանկատորեն շտկում էի խոսքը, ասելիքը պարզեցնում էի և ավելի ընկալելի էի փորձում մատուցել,որ ընկերները նրանից չվիրավորվեին: Դասերից հետո բակում կազմակերպեցի խաղ – վարժություն «Չեմ ուզում կռվել»:

Նպատակ ունեի նպաստել նորեկի նրբանկատ, կշռադատված վարքագծի ձևավորմանը, որն ընդհարումից խուսափելու միջոց է:

Բաժանվեցին խմբերի: Բոլորին տվեցի քարտեր, որտեղ նկարագրված էին իրավիճակներ՝ հակադիր տեսանկյունից: Պետք է բեմականացնեին և որոշեին, թե որն է ավելի շատ իրենց հարազատ:

Իրավիճակներ

1. Երեխաները ֆուտբոլ են խաղում: Տիգրանը գնդակը փոխանցում է Արմենին,բայց Արմենն ուշադիր չէր և չի հասցնում գնդակը բռնել,բաց է թողնում:

Ա–Տիգրան–Արմե՛ն, ապուշի՛ մեկը, քո պատճառով պարտվելու ենք, մի կողմ քաշվի՛ր:

Բ–Տիգրան–Արմե՛ն ջան, ընկերս, սրանից հետո աշխատիր ավելի ուշադիր խաղալ, որ չպարտվենք, լա±վ:

2. Անին ճոճանակ է նստել: Գրիգորն էլ է ուզում ճոճվել

Ա– Գրիգոր–Էյ, դու մկնիկ,ինչ վատն ես, հերի՛ք է ճոճվես, շու՛տ իջիր ես պիտի նստեմ, թե չէ՝ գնդակով կխփեմ, կընկնես ցած:

Բ – Գրիգոր– Անի՛ ջան, խնդրում եմ, կիջնե±ս դու գնդակով խաղաս, ես մի քիչ ճոճվեմ:

Լուսինեն մեծ եղբորը խնդրում է օգնել մաթեմատիկայի խնդիրը լուծել, բայց եղբայրը ցանկություն չունի:

Ա– Լուսինե–Տիգրան, եթե հենց հիմա չօգնես, մամային կասեմ,որ իր արգելած խաղն ես խաղում ու դու կտեսնես, թե ոնց կպատժի քեզ;

Բ – Լուսինե –Տիգրան ջան, ապերիկ,ախր ես քո բացատրածը շատ արագ եմ ընկալում,խնդրում եմ, օգնիր:

Բոլորն էլ վարպետորեն կատարեցին տրված առաջադրանքը: Քննարկեցինք հաճելի և տհաճ իրավիճակները, բոլորին էլ դուր էր եկել– Բ– տարբերակները: Ալեքսը ևս չէր տարբերվում իր ընտրությամբ: Նրան դուր էր եկել խաղ–ուսուցման այս տարբերակը: Ալեքսին հանձնարարեցի պատրաստել նման իրավիճակներ, հաջորդ անգամ ներկայացնելու համար; Նա շատ ոգևորվեց:

Երեխաների օգնությամբ հիշեցինք և կրկնեցինք «Ոսկե կանոնը»–Ընկերոջդ հետ վարվիր այնպես, ինչպես քեզ հետ կուզես վարվեն ընկերներդ:

Հաջորդ անգամ ներկայացրեցին Ալեքսի ընտրած իրավիճակները, որոնք բավականին լավն էին և դաստիարակչական:

Օրեր անց նկատեցի, որ Ալեքսի վարքագիծը աննկարագրելի փոխվել է: Նա ջերմ ու սիրալիր էր բարևում ընկերներին, խոսքն ավելի մեղմ էր, շփվում էր անկաշկանդ և վստահ: Ալեքսը ևս ինտեգրվեց նոր դասարանում և արդեն հաճույքով էր դպրոց հաճախում, շատ ուրախ էր: Աշակերտները ևս գոհ էին, նոր ընկեր էին ձեռք բերել:

Քայլ 4

Այս տարի ևս մեր դասարանը նոր աշակերտի մուտք ազդարարեց: Նորեկը չքնաղ, կապուտաչյա, քնքուշ աղջնակ էր: Նա կարծես բոլորից թաքցնում էր հայացքը, խոնարհում էր խոշոր աչուկները և գրեթե չէր շփվում, անհանգիստ էր:

Մայրիկի հետ ունեցած զրույցից պարզեցի, որ Մանեն խնդիր ունի: Տագնապ էր երեխայի մոտ, որն առաջացել էր նախկին ուսուցչի բարձր ձայնից և պարտադրող, խիստ պահանջներից: Ուսուցիչը խիստ պատժել էր ուշացողներին, վատ ընթերցողներին, ջնջումներով գրողներին, որից էլ սկսվել էին Մանեի անհանգստությունները, չնայած որ դեռևս ինքն այդ ցանկում չէր հայտնվել: Քնի մեջ անհանգիստ տնքոցները, օրվա ընթացքում լարված շարժումները ծնողներին ստիպել էին այցելել հոգեբանին, ում խորհրդով էլ փոխել էին դպրոցը:

Առաջին մի քանի օրերի ընթացքում Մանեն լուռ էր, զննում էր ինձ և ընկերներին:

Կատարեցինք «Մեր քաղաքակիրթ դասարանը» վարժությունը՝ որպես «Մուտքի տոմս»: Նստեցինք շրջանաձև:Տվեցի հետևյալ հարցերը.

– Պատահե±լ է, որ դասարանում ձեզ լավ չզգաք, չուզեք կամ ձեզ հաճելի չլինի այնտեղ գտնվելը, միմյանց միջև լարվածություն կամ վիրավորվածություն լինի: Ե±րբ, ի±նչ պատճառով:

– Ձեր կարծիքով ի±նչ է հարկավոր դասարանում անկաշկանդ և հաճելի մթնոլորտ ապահովելու համար:

Աշակերտները քննարկում են, թե ինչ կարելի է անել, որ դասարանը հաճելի լինի բոլորի համար; Այնուհետև խնդրեցի, որ երեխաներից յուրաքանչյուրը թերթիկի վրա մի որևէ վարքականոն գրի, որն իր կարծիքով կարող է նպաստել դասարանում բարյացակամ մթնոլորտ ստեղծելուն: Ես ևս թերթիկի վրա գրեցի վարքականոն:

Աշխատանքն ավարտելով՝ երեխաները թերթիկները փոխանցում են միմյանց, բարձրաձայն ընթերցում և քննարկում: Անհրաժեշտության դեպքում միահամուռ ջանքերով շտկումներ և լրացումներ են կատարում: Հետո դրանք դրվում են

քվեարկության: Ձայների կեսից ավելին ստացած կանոնները գրի են առնվում թղթի վրա և ընդունվում որպես «Դասարանի կանոնադրություն»:

Պաստառը փակցվում է դասարանի պատին, իսկ աշակերտները հանդիսավորությամբ պարտավորվում են հետևել դրանց: Կարդում եմ իմ և աշակերտներիս համատեղ կազմած երդման խոսքը և աշակերտներս կրկնում են ինձ հետ:

Մեր դասարանի հանդիսավոր երդումը

Մենք՝ այս դասարանի աշակերտներս, հանդիսավոր կերպով երդվում ենք սիրել, պաշտպանել, օգնել մեկմեկու, ուշադիր լինել միմյանց հանդեպ, հարգել ընկերների իրավունքները և դրանք ապահովելու համար կատարել մեր

պարտականությունները, ջանք չխնայել մեր դասարանը, ինչպես նաև մեր շրջապատը աշխարհի ամենահաճելի տեղը դարձնելու համար:

Ներուժը– Վարժությունը խթանում է համագործակցությունը, նպաստում է վերլուծելու, որոշում կայացնելու հմտությունների զարգացմանը: Քվեարկությամբ լուծումներ գտնելն ընտելացնում է ժողովրդավարական գործելակերպին:

Նկատեցի, որ Մանեն հանգիստ է, ակտիվ քննարկում է և սիրալիր է ընկերների նկատմամբ: Մանեի աչքերի մեջ վստահություն կարդացի:

Հաջորդ օրերին մեր գեղեցկուհին ավելի վաղ էր արթնանում, հարդարվում և ստիպում էր, որ իրեն ավելի շուտ դպրոց հասցնեն, ընկերների հետ հերթապահության էր շտապում: Նա ուրախ ժպիտով էր ինձ ողջունում, ակտիվ մասնակցում էր դասին և սկսել էր հետաքրքիր հարցեր ուղղել ինձ կամ ընկերներին:Տուն գնալիս ամուր գրկում էր և ասում.

– Վաղն անպայման կհանդիպենք:

Մանեի վարքագծի փոփոխությունը այդ կարճ ժամանակահատվածում նկատել էին նրան շրջապատող մարդիկ, ովքեր գիտեին խնդրի մասին: Մայրիկն ասում է, որ մեր Մանեն դարձել է այն ուրախ ու ժպտերես աղջնակը, որին կարծես ժամանակավորապես կորցրել էինք: Հարևաններն անգամ հարցրել են, թե ինչպես պատահեց, որ նա այլևս ինքնամփոփ չէ: Մանեն էլ չէր այցելում հոգեբանին, դրա կարիքն այլևս չկար: Մենք համատեղ ջանքերով լուծել էինք այդ խնդիրը:

Երբ քննարկում էինք մասնագիտությունները, Մանեն շատ վստահորեն ասաց, որ ուզում է ինձ նման ուսուցչուհի դառնալ; Փաստը շատ ողջունելի էր ու պարտավորեցնող; Երջանիկ էի, որ կարողացա օգնել ևս մի հրաշքի:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Իմ կատարած հետազոտության ընթացքում կատարեցի բազմաթիվ և տարատեսակ խաղ–վարժություններ, որոնք նպաստեցին նոր աշակերտի ինտեգրմանը:Կազմակերպեցի ժողովներ, որոնք օգնեցին աշակերտներին և ծնողներին ավելի միասնական գործել:

Ընթերցեցինք նյութեր, որոնք ևս կարևոր նշանակություն ունեցան երեխայի ինտեգրման գործում:

Ընթացքում բացահայտեցի, որ չկա դժվար ինտեգրվող երեխա: Պետք է փնտրել, հայտնաբերել յուրաքանչյուրին համապատասխան, մոտիվացնող մեթոդներ և առանձնահատուկ մոտեցում: Մոտիվացնող վերաբերմունքը ծնում է ցանկալի արդյունք: Ես դա տեսնում եմ իմ սաների ժպտուն աչքերում:

Եթե յուրաքանչյուր ուսուցիչ սիրով և նվիրումով կատարի ուսուցչի պարտականությունները, ապագայում կունենանք ամուր պետություն:

Այսպիսով ՝ Երբ կրթությունը ներառական է, ապա դրանից շահում են երեխան, ընտանիքը, պետությունը և հասարակությունը: Այն կրթության կազմակերպման գործընթաց է, որի հիմքում բոլոր երեխաների, այդ թվում նաև՝ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթություն ստանալու իրավունքն է: Այն արձագանքում է բոլոր սովորողների

բազմազան կարիքներին, մեծացնում է նրանց մասնակցությունը ուսումնական, մշակութային և համայնքային կյանքին և նվազեցնում է կրթությունից նրանց դուրս մնալը: Ներառական կրթությունը ենթադրում է կրթական գործընթաց, որն ուղղված է բոլոր սովորողների կարիքներին, ներառյալ հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ, բռնությունների ենթարկվող երեխաներ, աշխատող երեխաներ, փախստական կամ տեղահանված երեխաներ, միգրանտներ, աղքատ և չքավոր երեխաներ, լեզվական փոքրամասնություններ, ազգային փոքրամասնություններ, հակամարտությունների հետևանքով որբացած երեխաներ և այլն:

Ներառական կրթությունը ենթադրում է համակարգի, այլ ոչ թե երեխայի հարմարեցում

Ներառական կրթությունը հաշմանդամության սոցիալական մոդելի յուրօրինակ ածանցյալն է: Այն ընդունում է, որ բոլոր երեխաները տարբեր են, իսկ դպրոցներն ու հանրակրթական համակարգը պետք է հարմարվեն բոլոր սովորողների մտավոր, հոգեկան և ֆիզիկական զարգացման կարիքներին և անհատական պահանջմունքներին: Սակայն ներառում չի նշանակում բոլորին ձուլելու կամ միատեսակ դարձնելու ձգտում: Այն ընդունում է, որ երեխաները սովորում են տարբեր արագությամբ, իսկ ուսուցիչներին անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝ ուսուցման գործընթացի ճկունությունն ապահովելու համար: Պարզապես երեխաներին անհրաժեշտ է հասկանալի, մատչելի դասավանդում: Իսկ դա իր հերթին ենթադրում է երեխայի առանձնահատկություններին, անհատական կրթական պահանջմունքներին, զարգացման տեմպերին, ընդունակություններին և կարողություններին համապատասխանող տարբեր մեթոդների օգտագործում:

Ներառումը հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս կրթություն ստանալ իրենց համայնքներում և չմեկուսանալ ընտանիքներից: Համայնքից և ընտանիքից հեռու՝ հատուկ դպրոցներում երեխաներին տեղավորելը հակասում է ընտանիքի և համայնքի կյանքին մասնակցության նրանց իրավունքին: Ընտանիքից ու համայնքից հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների բաժանումը հաճախ վկայում է հասարակության մեջ նման մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող նախապաշարումների մասին: Ներառական կրթությունը կարող է բարձրացնել կրթության որակը բոլորի համար: Ներառական կրթությունը կարող է կրթական պրակտիկայում փոփոխությունների կատալիզատոր հանդիսանալ, որը կհանգեցնի կրթության որակի բարձրացմանը: Հաշմանդամություն և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառումը հանրակրթական դպրոցներ կստիպի ուսուցիչներին մշակել նոր՝ դեպի երեխան կողմնորոշված ուսուցման և ուսումնառության մեթոդներ, ապահովել մեծ թվով մասնակիցների ընդգրկվածություն ուսումնական գործընթացում: Դրանից օգուտ կստանան բոլոր երեխաները: Բազմաթիվ

ուսուցիչներ կարծում են, որ կրթական հատուկ կարիքներով երեխաների ուսուցման համար իրենց անհրաժեշտ կլինեն «հատուկ հմտություններ»: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հատուկ կարիքներով երեխաներին հանրակրթական գործընթացի մեջ ներգրավելու համար ընդամենը անհրաժեշտ է որակյալ, հասկանալի և մատչելի դասավանդում, որը և նպաստում է աշակերտների ակտիվության բարձրացմանը: Սա այն է, ինչ պետք է անի ուսուցիչը՝ բոլոր երեխաներին որակյալ կրթություն տալու համար:

Ներառական կրթությունն օգնում է հաղթահարելու խտրականությունը

Հասարակության մեջ հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ կանխակալ վերաբերմունքը բավական ամուր է արմատավորված: Պատճառներն են՝տեղեկատվության բացակայությունը նրանց մասին ունեցած գիտելիքների, նրանց հարևանությամբ ապրելու փորձի բացակայությունը կամ պակասը: Նման պատճառներով ստեղծված կարծրատիպերը կոտրելը բավական դժվար է: Սակայն փորձը ցույց է տալիս, որ բարենպաստ մթնոլորտում երեխաները ավելի հանգիստ, քան մեծահասակները, ընդունում են տարբերությունները: Երեխաները մեր ապագա ծնողներն են, ուսուցիչները, փաստաբանները և քաղաքական գործիչները: Եթե հաշմանդամություն ունեցող երեխաները ևս հաճախեն նույն դպրոցը, ինչ մնացածները, ապա բոլորի մեջ կձևավորվի անկանխակալ վերաբերմունք հաշմանդամություն ունեցող բոլոր մարդկանց նկատմամբ, և կարմատավորվի այն գիտակցությունը, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ հասարակության լիիրավ անդամներ են:

Գրականության ցանկ

1. https://hy.warbletoncouncil.org/psicopatia-infantil

2. https://hy.wikipedia.org/
3. Յանուշ Քորչակ «Ինչպես սիրել երեխային»
4. Լյուդմիլա Պետրրանովսկայա «Եթե երեխան դժվար է»
5. Լյուդմիլա Պետրրանովսկայա «Գաղտնի աջակցություն.